

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության, առողջապահության, սպորտի և զբոսաշրջության բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,  
նպատակ ունենալով ամրապնդել բարեկամական հարաբերությունները և  
նպաստել երկու երկրների միջև մշակութային համագործակցության ընդլայնմանը,  
կազմեցին սույն Համաձայնագիրը ներքոհիշյալի մասին.

#### Հոդված 1

Կողմերը իրավահավասարության և փոխշահավետության հիման վրա  
համաձայնեցին երկու երկրների համապատասխան հիմնարկների և  
կազմակերպությունների միջև աջակցել ու խրախուսել փոխանակությունը և  
համագործակցությունը մշակույթի, կրթության, հասարակական գիտությունների,  
առողջապահության, սպորտի, հրատարակչական գործի, լրագրողական,  
ռադիոհաղորդումների, հեռուստատեսության, կինեմատոգրաֆիայի և  
զբոսաշրջության բնագավառներում:

#### Հոդված 2

Կողմերը համաձայնեցին մշակույթի և արվեստի բնագավառներում  
փոխանակությունը և համագործակցությունն իրականացնել հետևյալ ձևերով՝

- 1) գրողների, արվեստի գործիչների խմբերի փոխանակում,
- 2) գեղարվեստական կոլեկտիվների փոխանակում,
- 3) մշակույթի և արվեստի ցուցահանդեսների փոխանակում,
- 4) մշակույթի օրերի փոխադարձ կազմակերպում:

#### Հոդված 3

Կողմերը համաձայնեցին կրթության բնագավառում փոխանակումներն ու  
համագործակցությունն իրականացնել հետևյալ միջոցներով.

1. Կողմերը կխրախուսեն երկու երկրների ուսումնական հաստատությունների  
միջև ուղիղ կապերի հաստատումն ու համագործակցությունը:

2. Կողմերը, ըստ անհրաժեշտության, կիրավիրեն մյուս Կողմի դասախոսներին  
և գիտնականներին՝ համապատասխան բուհերում կարճատև դասախոսություններ  
կարդալու կամ համատեղ գիտական հետազոտություններ կատարելու համար:

3. Կողմերը կխաբխուսեն իրենց համապատասխան երկրների լեզվի և  
գրականության ուսումնասիրությունը՝ իբրև երկու երկրների Ժողովուրդների

հաղորդակցման, փոխադարձաբար միմյանց մշակույթներին ծանոթանալու և համագործակցության ամրապնդման կարևոր միջոցի: Այս նպատակով Կողմերը փոխադարձաբար կօգնեն միմյանց դասախոսների ուսուցման ու որակավորման բարձրացման, ուսումնական ձեռնարկների տրամադրման գործում:

#### **Հոդված 4**

Կողմերը համաձայնեցին, իրենց հնարավորությունների սահմաններում, մշակույթի և արվեստի վերաբերյալ գրականություն փոխանակել:

#### **Հոդված 5**

Կողմերը կնպաստեն երկու երկրների մարզական կազմակերպությունների միջև կապերի զարգացմանն ու ամրապնդմանը:

#### **Հոդված 6**

Կողմերը կնպաստեն երկու երկրների թանգարանների և գրադարանների միջև իրականացվող փոխանակումներին և համագործակցությանը:

#### **Հոդված 7**

Կողմերը համաձայնեցին փոխանակումներ և համագործակցություն իրականացնել հրատարակչական և լրագրողական բնագավառներում:

#### **Հոդված 8**

Կողմերը կխրախուսեն ուղիղ համագործակցությունը երկու երկրների ռադիոյի և հեռուստատեսության համապատասխան հիմնարկների միջև և ռադիոժրագրերի և հեռուստատեսային ծրագրերի փոխանակումները: Կողմերը կխրախուսեն նաև ֆիլմերի շաբաթների և այլ միջոցառումների փոխանակումները:

#### **Հոդված 9**

Կողմերը համաձայնեցին նպաստել երկու երկրների հասարակական գիտությունների բնագավառի համապատասխան գիտահետազոտական հիմնարկների, առանձին գիտնականների և մասնագետների փոխհամաձայնեցված գիտական փոխանակումների զարգացմանը և համագործակցությանը՝ հետազոտություններ կատարելու, դասախոսություններ կարդալու և նյութեր փոխանակելու նպատակով:

## Հոդված 10

Կողմերը կխրախուսեն և կաջակցեն երկու երկրների առողջապահական հիմնարկների միջև անմիջական կապերի ու համագործակցության խորացմանը, կնպաստեն իրենց երկրներում առողջապահական համակարգի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված աշխատանքային փորձի և առողջապահական հարցերի շուրջ տեղեկության փոխանակմանը:

## Հոդված 11

Կողմերը կխրախուսեն և կնպաստեն երկու երկրների զբոսաշրջային հիմնարկների միջև գործարար կապերի ամրապնդմանն ու զարգացմանը՝ այդ երկրների ժողովուրդների կյանքին, աշխատանքին և մշակույթին առավել լիարժեք ծանոթանալու նպատակով:

## Հոդված 12

Կողմերը կնշակեն կոնկրետ պլաններ սույն Համաձայնագիրն իրագործելու համար և կպայմանավորվեն ֆինանսական հարցերի մասին:

Երկու Կողմերի համապատասխան գերատեսչությունները սույն Համաձայնագրի հիման վրա կարող են համագործակցության առանձին գործնական ուղղությունների վերաբերյալ ստորագրել երկկողմ համաձայնագրեր, արձանագրություններ և պլաններ:

## Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կգործի 5 տարվա ընթացքում: Եթե այդ ժամկետի ավարտից առնվազն 6 ամիս առաջ Կողմերից ոչ մեկը գրավոր չի դիմի մյուս Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու խնդրանքով, ապա ամեն անգամ դրա գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 5 տարիների համար:

Կատարված է Պեկին քաղաքում 1992 թվականի հուլիսի 4-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և չինարեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են: Համաձայնագրին կից ռուսերեն տեքստը հանդիսանում է աշխատանքային:

***Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի հուլիսի 4-ից:***